

**Տեղեկատվություն**  
**«Ն մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև**  
**համագործակցության վերաբերյալ**

| Թիվ | Համագործակցություն  | Տարեթիվ                       | Ընթացիկ վիճակ   |
|-----|---|-------------------------------|---|
| 1   | „Սեյվ դը չիլդրեն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եղեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգում: | 2015թ. հունվար-մինչև տարեվերջ | „Սեյվ դը չիլդրեն ինտերնեյշնլ,, հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվում են Ն. Սասնաշենի մշակույթի տան, Կաքավաձորի, Նոր Եղեսիայի, Արայի դպրոցների, Երնջատափի բնակելի շենքի կոյուղու, Բյուրականի մշակույթի տան, Կարբիի մանկապարտեզի վերանորոգման ծրագրեր: |
| 2   | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկի բնակիչներ Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր:  | 2015թ. հունվար-մինչև տարեվերջ | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Վերին Սասունիկում իրականացվում է Ռազմիկ Պետրոսյանի, Լաերտ Գրիգորյանի և Արման Հովհաննիսյանի անապահով ընտանիքների համար բնակարանների բարելավման ծրագիր:   |
| 3   | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 դպրոցում ոռոգման համակարգի կառուցում:  | 2015թ. հունիս-հոկտեմբեր       | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 դպրոցում կառուցվում է ոռոգման համակարգ:  |

|   |  |                  |  |
|---|--|------------------|--|
| 4 | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի վերանորոգում:   | 2015թ. ընթացքում | Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվում է Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը:  |
| 5 | Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Աշտարակ, Օհանավան, Մուղնի, Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում: | 2014-2015թթ      | Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է Աշտարակ, Օհանավան, Մուղնի, Սասունիկ, Կարբի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում: Աշխատանքներն ընթացքի մեջ են և շարունակական են լինելու:   |
| 6 | Համագործակցություն Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ:   | 2014-2015թթ.     | Դիակոնիա բարեգործական հիմնադրամը մարզում իրականացնում է սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական, սոցիալական աջակցության, բնակարանների վերանորոգման, ուսանողական վարձերի տրամադրման ծրագրեր: Իրականացվում են բնակարանի վերանորոգման, ուսման վարձավճարի հատկացման, բուժօգնության, սոցիալական խնդիրների օժանդակման եւ այլ ծրագրեր: Բոլոր ծրագրերը շարունակական են: |
| 7 | ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, շրջանակում ներառական նախակրթարանի ստեղծում Թալին քաղաքում:      | 2014-2015թթ.     | ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում „Թալինի կանանց ռեսուրս կենտրոն,, զարգացման հիմնադրամի կողմից Թալին քաղաքում ստեղծվելու է ներառական նախակրթարան, որը իրականացնելու է Թալինի տարածաշրջանում ծնողների համար հոգեբանական, սոցիոլոգիական, առողջապահական, զբոսաշրջության թեմաներով ուսուցումներ, խորհրդատվություններ:                   |

|     |   |                       |   |
|-----|---|-----------------------|---|
| 8   | ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար», ծրագրի շրջանակում համատեղ ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոցի ստեղծում մարզի սահմանամերձ գյուղերում: | 2014-2015թթ.          | ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար», ծրագրի մրցույթում հավանության է արժանացել մարզի սահմանամերձ գյուղերում համատեղ ստեղծել ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոց հիմնելու ծրագիրը:          |
| 9   | «Հայաստան», համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում համակարգչային դասասենյակների ստեղծում:   | 2015թ. ընթացքում      | «Հայաստան», համահայկական հիմնադրամի կողմից Աշտարակի թիվ 3 և Չքնաղի դպրոցներում իրականացվում է համակարգչային դասասենյակների ստեղծման ծրագիր:   |
| 10  | «Հայ կրթական հիմնարկություն», հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի փոխհատուցում:   | 2015թ. ընթացքում      | «Հայ կրթական հիմնարկություն», հիմնադրամի կողմից փոխհատուցվել է անապահով 3 ուսանողի ուսման վարձը:  |
| 11  | Կանգաս-Հայաստան գործընկերության ծրագրի շրջանակում Աշտարակի հիվանդանոցի վերանորոգում:  | 2015թ. ընթացքում      | Կանգաս-Հայաստան գործընկերության ծրագրի շրջանակում Աշտարակի իրականացվում է հիվանդանոցի վերանորոգում:   |
| 12  | «Fuller Center for Housing Armenia» բարեգործական կազմակերպության կողմից կիսակառույց տների կառուցում եւ տանիքի վերանորոգում:   | 2015թ. ընթացքում      | «Fuller Center for Housing Armenia» բարեգործական կազմակերպության կողմից Աշտարակ, Ագարակավան, Մելիքայուղ, Կաքավաձոր, Շղարշիկ, Գետափ. Ուջան, Ն. Սասնաշեն համայնքներում իրականացվում է կիսակառույց տների կառուցման եւ տանիքի վերանորոգման ծրագիր |
| 13  | «Կամրջակ», սոցիալ-բարեգործական կազմակերպության կողմից մանկապարտեզների գույքի ձեռքբերում:  | 2015թ. մայիս-նոյեմբեր | «Կամրջակ», սոցիալ-բարեգործական կազմակերպության կողմից Ագարակավան համայնքի մանկապարտեզին տրամադրվել է գույք:   |
| 14. | «USAID» ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակի կողմից գյուղտեխնիկայի/ հացահատիկային կոմբայն/, ոռոգման համակարգի վերանորոգման, խմուռների  | 2015թ. ընթացքում      | «USAID» ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակի կողմից Մաստարա համայնքում իրականացվել է գյուղտեխնիկայի/ հացահատիկային կոմբայն/ հատկացման, Սարալանջ համայնքում՝ ոռոգման համակարգի վերանորոգման, Նիգավան համայնքում՝                                |

|     | կառուցման ծրագրերի իրականացում:   |                             | խմուղների կառուցման ծրագրեր:   |
|-----|---|-----------------------------|--|
| 15. | Մարզպետարանի մի խումբ քաղաքացիական ծառայողների մասնակցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում վերապատրաստման դասընթացներին:   | 11.10.2015թ-<br>14.11.2015թ | Մարզպետարանի մի խումբ քաղաքացիական ծառայողներ գործուղվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում և մասնակցել ,, Զբոսաշրջության կառավարում և զարգացում,, և ,,Չինական ավանդական մշակույթի ուսումնասիրում,, խորագրերով վերապատրաստման դասընթացներին:  |
| 16. | COAF-ի / Հայաստանի մանուկների հիմնադրամ/ կողմից Արտենիի՝ 300 աշակերտ ունեցող թիվ 1 միջնակարգ դպրոցում մարզադահլիճի նորոգում:  | 23.10.2015թ.                | Կայացել է COAF-ի / Հայաստանի մանուկների հիմնադրամ/ կողմից վերանորոգված Արտենիի՝ 300 աշակերտ ունեցող թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի բացումը: Նորոգումանը աջակցել է մարզպետը: Ծրագիրը հնարավոր է եղել իրագործել բարերարներ Արա և Սոնյա Հասթիների ֆինանսավորմամբ, ինչպես նաև Գերմանիայում գործող Nairi e.V.-für die Kinder Armeniens (Հայաստանի երեխաների համար) հասարակական կազմակերպության ներդրումների շնորհիվ:   |
| 17. | Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, արտակարգ եւ լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկու, ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության գործերի հանձնակատար Նադյա Լիխտենբերգերի, Շվեդիայի Թագավորության գործերի հավատարմատար Մորթեն Էնբերգի այցը ՀՀ Արագածոտնի մարզ: | 30.10.2015թ.                | Մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունել է Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, արտակարգ եւ լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկու, ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության գործերի հանձնակատար Նադյա Լիխտենբերգերին, Շվեդիայի Թագավորության գործերի հավատարմատար Մորթեն Էնբերգին: Կողմերը քննարկել են ԵՄ-Հայաստան համագործակցության եւ ԵՄ աջակցությանը վերաբերող ընդհանուր թեմաներ: Սարգիս Սահակյանը պատրաստակամություն է հայտնել ԵՄ պատվիրակության հետ համագործակցությունը ընդլայնելու համար: Իբրեւ գործունեության շրջանակ, առանձնացվել է մարզում գիտական մի շարք կազմակերպությունների առկայությունը, որոնց հնարավորությունները կարելի է օգտագործել ոլորտի զարգացման համար: Քննարկվել են նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության խթանման, գյուղատնտեսության, կրթության, մշակութային ոլորտներում ծրագրերի իրագործման հետ կապված խնդիրներ: |

|     |   |                        |   |
|-----|---|------------------------|---|
|     | Քննարկում Դաշտադեմի պատմամշակութային արժեքների վերականգնման շուրջ   | 09.11.2015թ.           | Մարզպետը, ՀՀ մշակույթի նախարարը ,ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը այցելել են Դաշտադեմ համայնք և կայացել է համատեղ քննարկում Դաշտադեմի պատմամշակութային արժեքների վերականգնման շուրջ   |
| 18. | Մասնակցություն Երևանում կայացած՝ Խաղաղության կորպուսի կամավորների 23-րդ խմբի երդման արարողությանը:  | 12.11.2015թ.           | Խաղաղության կորպուսի հրավերով երդման արարողությանը ներկա էր ՀՀ Արագածոտնի մարզի ղեկավարությունը: Կայացավ հանդիպում ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսի հետ: Պայմանավորվածության համաձայն՝ մարզում կամավորների թիվը ավելացավ 3-ով և դարձավ 9:   |
| 19. | Հանդիպում ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնսալո Ուոլդլաբեիտայի հետ:  | 16.11.2015թ.           | Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնսալո Ուոլդլաբեիտան այցելել է ՀՀ Արագածոտնի մարզ: Կայացել է հանդիպում մարզի ղեկավարության հետ, քննարկվել են երկուստեք հետաքրքրող հարցեր, դեսպանի համար կազմակերպվել են ճանաչողական այցեր մարզի համայնքներ:                |
| 20. | Մասնակցություն ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունենացած՝ «Տարածքային զարգացման հեռանկարները Հայաստանում. ՀՄՆՀ/ՀՏՁՀ-ի 20-ամյակ. տարածքային զարգացման գործառնությունները և համայնքների միջոցով զարգացում » խորագրով միջազգային համաժողովին: | 9-11. 2015թ.           | Մարզպետ Սարգիս Սահակյանը մասնակցել է ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունենացած՝ «Տարածքային զարգացման հեռանկարները Հայաստանում. ՀՄՆՀ/ՀՏՁՀ-ի 20-ամյակ. տարածքային զարգացման գործառնությունները և համայնքների միջոցով զարգացում » խորագրով միջազգային համաժողովին: |
| 21  | Մասնակցություն կազմակերպված Երևանում «Հանրային իրազեկումը՝ որպես աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման անկյունաքար»   | 2015թ. 15-16 դեկտեմբեր | Մարզի պատվիրակությունը մասնակցել է Երևանում կազմակերպված «Հանրային իրազեկումը՝ որպես աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման անկյունաքար» խորագրով երկօրյա միջազգային համաժողովին՝ նվիրված աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) հանրային իրազեկման                                |

|  |   |  |  |
|--|---|--|--|
|  | <p>խորագրով երկօրյա միջազգային համաժողովին՝ նվիրված աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) հանրային իրազեկման խնդիրներին և Սենդայի գործընթացի համատեքստում լրատվամիջոցների դերին ու ազդեցությանը:</p> |  | <p>խնդիրներին և Սենդայի գործընթացի համատեքստում լրատվամիջոցների դերին ու ազդեցությանը:</p> |
|--|---|--|--|